ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ (ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ) ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Արսեն Մարտիրոսյան
ՀՀ դատախազության Լոռու մարզի դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Քրեական գործով իրականացվող հետաքննության և նախաքննության օրինականության ապահովման կարևորագույն երաշխիքներից է դատախազական հսկողությունը: Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության դրսևորումներից է նաև քրեական գործով վարույթը կարճելու որոշման օրինականության, հիմնավորվածության ստուգումը[1]: Այդ նպատակով քրեադատավարական օրենսգրքով նախատեսված են համապատասխան իրավական մեխանիզմներ ինչպես հսկող, այնպես էլ վերադաս դատախազի կողմից քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու կամ դադարեցնելու) որոշման օրինականության և հիմնավորվածության ապահովման համար:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին:

Մեջբերված քրեադատավարական նորմերի բովանդակությունից հետևում է, որ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումը դատավարության համապատասխան մասնակիցները կարող են վերադաս դատախազին ***բողոքարկել 7-օրյա ժամկետում***: Վերադաս դատախազը իր հերթին, ստանալով բողոքը, ***7-օրյա ժամկետում որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին***:

Գործնականում հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշումը համապատասխան դատավարության մասնակցի կողմից վերադաս դատախազին բողոքարկվում է այն կայացնելուց տևական ժամանակ անց: Ընդ որում, դատավարության մասնակիցը վերադաս դատախազին հասցեագրված բողոքին կից չի ներ-

[1] Տե՛ս ***Ա.Ղավթյան, Ա.Ղամբարյան,*** Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման օրինականության ապահովման կառուցակարգերը //Օրինականություն, 2010, № 59, էջ 8-9:

կայացնում որևէ փաստաթուղթ, որը կհավաստի, թե երբ է բողոքաբերը փաստացի ստացել վիճարկվող որոշումը:

Նման պայմաններում հարց է առաջանում, թե ինչպես պետք է գործի վերադաս դատախազը՝

1) քննարկի՞ բողոքը և առերևույթ ժամկետանց լինելու հիմքով մերժելու կամ առանց քննության թողնելու մասին որոշում կայացնի՞,

2) գրությամբ բողոքաբերին պարզաբանի՞ բողոքարկման սահմանված ժեմկետը բաց թողնված լինելու մասին՝ առանց համապատասխան որոշում կայացնելու,

3) բողոք ներկայացրած անձից պահանջի՞ այն ստանալու և օրենքով սահմանված 7-օրյա ժամկետում բողոքարկելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ և նոր միայն քննարկի՞:

Առերևույթ ժամկետանց լինելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին որոշման դեմ ներկայացված բողոքի կապակցությամբ որոշում չկայացնելու, այսինքն՝ գրությամբ պատասխանելու իրավաչափությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումից հետևում է, որ բողոքի քննարկման արդյունքում վերադաս դատախազը միշտ պարտավոր է կայացնել հետևյալ երկու որոշումներից որևէ մեկը՝ ***բողոքը բավարարել կամ մերժել***:

Օրենսդրի որդեգրած մոտեցումից, ըստ էության, հետևում է, որ բողոքը մերժելու մասին որոշում վերադաս դատախազը պետք է կայացնի հետևյալ երկու դեպքում՝

ա) բողոքը օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու դեպքում, այն ըստ էության քննարկելու արդյունքում,

բ) բողոքը օրենքով սահմանված 7-օրյա ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու դեպքում:

Բողոքն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու դեպքում վերադաս դատախազն այն ստանալու պահից 7-օրյա ժամկետում պարտավոր է ըստ էության քննարկել և կայացնել պատճառաբանված որոշում բողոքը մերժելու մասին:

Ինչ վերաբերում է բողոքը մերժելու երկրորդ իրավիճակին, այսինքն՝ 7-օրյա ժամկետի խախտմամբ ներկայացված լինելուն, ապա տվյալ դեպքում որոշում կայացնելու հանգամանքի վերաբերյալ պրակտիկայում մոտեցումները տարբեր են: Այսպես, մի դեպքում, երբ իրեն հասցեագրված բողոքի ուսումնասիրությամբ վերադաս դատախազը պարզում է, որ առերևույթ բողոքը ներկայացվել է 7-օրյա ժամկետի խախտմամբ, ապա, առանց որոշում կայացնելու, բողոքաբերին պարզաբանում է, որ բողոքը ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 7-օրյա ժամկետի խախտմամբ, հետևաբար բողոքի քննարկման կապակցությամբ համապատասխան որոշում չի կայացվել:

Մեկ այլ դեպքում՝ քննարկվում և որոշում է կայացվում ժամկետանց լինելու հիմքով բողոքը մերժելու կամ առանց քննության թողնելու մասին:

Կարծում ենք, որ բողոքին ցանկացած այլ եղանակով պատասխանելը, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, չի կարող գնահատվել իրավաչափ, քանի որ օրենսդիրը դատավարության մասնակցի կողմից վերադաս դատախազին ներկայացված բողոքին գրությամբ պատասխանելու իրավասություն չի վերապահել: Այսինքն՝ այն բոլոր դեպքերում, երբ վերադաս դատախազը քրեական գործի նյութերի և բողոքի ուսումնասիրությամբ կպարզի, որ բողոքը առերևույթ ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ապա, առանց բողոքը ըստ էության քննարկելու, պարտավոր է որոշում կայացնել այն մերժելու մասին՝ քրեադատավարական օրենքով սահմանված 7-օրյա ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ: Իսկ եթե, այնուամե-

նայնիվ, քրեական գործի ուսումնասիրությամբ կպարզի, որ առկա են քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու) մասին որոշումը վերացնելու հիմքեր, ապա պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կարճելու մասին որոշումը վերացնելու համար միջնորդություն ներկայացնի ՀՀ գլխավոր դատախազին:

Բողոքը ժամկետանց լինելու հիմքով մերժելու դեպքում, երբ դատական ստուգմամբ հաստատվի, որ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված 7-օրյա ժամկետի պահպանմամբ, ապա դատարանը պետք է պարտավորեցնի վերադաս դատախազին՝ բողոքը ըստ էության քննարկելու և որոշում կայացնելու, հակառակ դեպքում այն պետք է մերժի:

Մեր այս տեսակետը չընդունող որոշ իրավաբաններ գտնում են, որ տվյալ պարագայում խնդիր է առաջանում բողոքի քննարկման 7-օրյա ժամկետի սկզբնական պահի հաշվարկման: Մասնավորապես, վերջիններս նշում են՝ քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերադաս դատախազի՝ բողոքի քննարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այն ստանալու պահից, ապա հարց է առաջանում, ինչպես հաշվարկել բողոքարկման 7-օրյա ժամկետը, երբ ժամկետանց լինելու հիմքով, առանց ըստ էության քննարկելու, վերադաս դատախազը մերժում է անձի բողոքը, սակայն հետագայում բողոքաբերը դատարանում հիմնավորում է, որ բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետում, իսկ դատարանը այդ հիմքով պարտավորացնում է վերադաս դատախազին դիմողի բողոքը ըստ էության քննարկել, որից հետո դատախազը որոշում է կայացնում բողոքը բավարարելու և քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելու մասին: Ընդ որում, բողոքը վերադաս դատախազից ստանալու և դատավարության մասնակցի կողմից դատարան բողոքարկելուց հետո անցած է լինում տևական ժամանակ: Այս պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի տառացի մեկնաբանման դեպքում ստացվում է, որ վերադաս դատախազը քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) որոշումը վերացնելու մասին որոշում կայացրեց 7-օրյա ժամկետի խախտմամբ, քանի որ օրենքի ուժով վերադաս դատախազի համար սահմանված 7-օրյա ժամկետը սկսվել էր այն ստանալու պահից:

Կարծում ենք, որ այս մոտեցումը ընդունելի չէ, քանի որ տվյալ պարագայում վերադաս դատախազը քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդում չիրականացնելու կամ դադարեցնելու) մասին նախաքննական մարմնի որոշումը վերացնում է դատարանի որոշման ուժով:

Ինչպես վերը նշվեց, բողոքի քննարկման արդյունքում վերադաս դատախազը իրավասու է նաև որոշում կայացնել այն բավարարելու և քրեական գործի վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) մասին նախաքննական մարմնի որոշումը վերացնելու վերաբերյալ: Նման որոշում կայացվում է այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ, և վերադաս դատախազի կողմից քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նախաքննությունը կատարվել է թերի, չեն ձեռնարկվել բավարար միջոցներ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման ուղղությամբ, քրեական գործով վարույթի կարճման հիմքը սխալ է ընտրվել և այլն:

Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ առերևույթ 7-օրյա ժամկետի պահպանմամբ քրեական գործով վարույթի կարճման (քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չիրականացնելու) մասին որոշման դեմ տուժողի բերած բողոքի քաննարկման արդյունքում վերադաս դատախազը որոշում կայացնի այն բավարարելու մասին, սակայն 7-օրյա ժամկետի խախտմամբ այն վերացնելու մասին

որոշումը դատավարության մյուս մասնակցի՝ մեղադրյալի կողմից բողոքարկվի դատարան և դատական ստուգման արդյունքում հավաստվի, որ քրեական գործով վարույթը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չիրականացնելու) մասին որոշումը վերացվել է 7-օրյա ժամկետի խախտմամբ:

Տվյալ իրավիճակում, երբ դատական ստուգման արդյունքում հավաստվի, որ վերադաս դատախազին բողոք ներկայացվել է 7-օրյա ժամկետի խախտմամբ, և վերադաս դատախազը որոշում է կայացրել այն բավարարելու մասին դրա անտեսմամբ, ապա տվյալ գործով վարույթը օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ վերացված լինելու հիմքով պետք է կարճվի՝ դատավարության մյուս կողմի իրավունքների խախտում թույլ չտալու հիմքով: Նշված իրավիճակում, կարծում ենք, տուժողի իրավունքների խախտում թույլ չի տրվում, քանի որ գործով վարույթի կարճումը պայմանավորված է առաջին հերթին այն բանով, որ տուժողը օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը խախտել է:

Վերադաս դատախազի կողմից դատավարության համապատասխան մասնակցի ներկայացրած բողոքի ժամկետի մեջ կամ ժամկետանց լինելու հանգամանքը ստուգելու առումով կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 5-րդ մասում տեղ գտած այն դրույթը, համաձայն որի՝ պաշտոնատար անձանց կողմից սահմանված ժամկետը պահպանելը հաստատվում է դատավարական փաստաթղթերում՝ համապատասխան նշումով: Քրեական դատավարությանը մասնակցող անձանց հանձնման ենթակա փաստաթղթերի ստացման փաստը հաստատվում է գործին կցված նրանց ստորագրությամբ:

Քրեական գործի նյութերում նման փաստաթղթի առկայությունը հնարավորություն կտա վերադաս դատախազին ստուգելու՝ արդյոք այն օրենքով սահմանված ժեմկետո՞ւմ է ներկայացվել, թե՞ այն խախտվել է:

Վերադաս դատախազի կողմից բողոքաբերից օրենքով սահմանված 7-օրյա ժամկետում վիճարկվող որոշումը բողոքարկելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ պահանջելու և այն ստանալուց հետո միայն բողոքը քննարկելու, այդ թվում՝ 7-օրյա ժամկետը հաշվարկելու իրավաչափությունը:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից բխում է, որ բողոքի քննարկման արդյունքում վերադաս դատախազը միշտ պետք է կայացնի համապատասխան որոշում: Ընդ որում, այդպիսի որոշում պետք է կայացվի բողոքը ստանալու պահից 7-օրյա ժամկետում:

Գործնականում հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ անձի կողմից ներկայացված բողոքի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից հնարավոր չէ պատկերացում կազմել, թե բողոքաբերը այն ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետի պահպանմամբ, թե ոչ: Նշված իրավիճակում վերադաս դատախազի համար ստեղծվում են որոշակի դժվարություններ բողոքաբերի ներկայացրած բողոքի ժամկետները պահպանված լինելու հարցում: Պրակտիկան անցել է հետևյալ ճանապարհը: Այն դեպքում, երբ ներկայացված բողոքին կցված չեն եղել օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր, ապա վերադաս դատախազը բողոքը գնահատում է ոչ պատշաճ և դատավարության մասնակցից գրությամբ պահանջում է դրանք: Եթե բողոքաբերը ներկայացնում է այդպիսի փաստաթուղթ, ապա բողոքը գնահատվում է պատշաճ, այնուհետև միայն դրա ըստ էության քննարկմամբ կայացվում է որոշում այն բավարարելու կամ մերժելու մասին: Հակառակ դեպքում՝ բողոքը ըստ էության չի քննարկվում: Ընդ որում, առանձին իրավիճակներում բողոքաբերի կողմից համապատասխան փաստաթուղթ չներկայացնելու դեպքում վերադաս դատախազը որոշում չի կայացնում նաև բողոքը ժամկետանց ներկայացված լինելու հիմքով մերժելու մասին:

Վերադաս դատախազի՝ նշված գործողության իրավաչափության վերաբերյալ համապատասխան իրավական դիրքորոշում են հայտնել նաև դատարանները: Այս-

պես, 2014 թվականի ապրիլի 11-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13136614 քրեական գործը: Կատարված նախաքննությամբ 2015 թվականի օգոստոսի 13-ին նախաքննական մարմինը որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Այդ որոշումը հանցագործության մասին հաղորդում տված անձի կողմից *2015 թվականի սեպտեմբերի 2-ին* բողոքարկվել է վերադաս դատախազին, *սեպտեմբերի 7-ին* վերադաս դատախազը բողոք ներկայացրած անձից խնդրել է ներկայացնել բողոքը օրենքով սահմանված 7-օրյա ժամկետում ներկայացնելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ: Նույն թվականի *սեպտեմբերի 17-ին* բողոքաբերը վերադաս դատախազին է ներկայացրել վիճարկվող որոշումը ստանալու և վերադաս դատախազին բողոքարկելու հանգամանքը հավաստող, փոստային ծառայությունից ստացված համապատասխան փաստաթուղթ:

Վերադաս դատախազի *2015 թվականի սեպտեմբերի 19-ի* որոշմամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին նախաքննական մարմնի որոշումը 2015 թվականի օգոստոսի 13-ի որոշումը վերացվել է:

2015 թվականի հոկտեմբերի 13-ին դատավարության մյուս կողմի ներկայացուցիչը, որի նկատմամբ ներկայացվել է ենթադրյալ հանցագործության վերաբերյալ հաղորդում, վերադաս դատախազի որոշումը՝ օրենքով սահմանված 7-օրյա ժամկետի խախտմամբ հարուցված լինելու պատճառաբանությամբ բողոքարկել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու իր վստահորդի խախտված իրավունքները:

Դատարանը, քննության առնելով բողոքը, 2015 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է, որ բողոքներն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում վերադաս դատախազը որոշում չի կայացրել, այդ պատճառով քրեական գործի վարույթը վերսկսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Դատարանի հիշյալ որոշումը վերադաս դատախազի կողմից բողոքարկվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարան: Վերջինս, ստուգելով առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, 2016 թվականի մարտի 29-ի որոշմամբ հիմնավորված և իրավաչափ է ճանաչել վիճարկվող դատական ակտում տեղ գտած հետևությունն այն մասին, որ 2015 թվականի սեպտեմբերի 3-ին վերադաս դատախազը, ստանալով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման դեմ բերված բողոքը, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ 7-օրյա ժամկետում այն մերժելու կամ բավարարելու մասին որոշում կայացնելու պահանջը, այն է՝ մինչև 2015 թվականի սեպտեմբերի 11-ն այդ մասին որոշում չի կայացրել:

Արդյունքում վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ առաջին ատյանի դատարանը իրավաչափ հետևության է հանգել. կայացնելով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ վիճելի որոշումը՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, 263-րդ 2-րդ մասով սահմանված 7-օրյա ժամկետը և քրեական գործի վարույթը վերսկսվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտմամբ:

Միաժամանակ, վերաքննիչ դատարանը փաստել է, որ օրենքով սահմանված 7-օրյա ժամկետը լրանալուց հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վա-

րույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու լիազորությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, վերապահված է միայն ՀՀ գլխավոր դատախազին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ կոնկրետ դեպքում վերադաս դատախազի կողմից օրենքով ամրագրված դատավարական ժամկետների խախտմամբ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշումը վերացնելու արդյունքում քրեական գործով վարույթը վերսկսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պահանջի խախտմամբ՝ հանգեցնելով դիմողի իրավունքների և ազատությունների խախտման:

Այս որոշումներից տեսանելի է, որ դատարանները վերադաս դատախազի գործողությունները ոչ իրավաչափ են գնահատել ոչ թե այն պատճառով, որ դատախազը դատավարության մասնակիցներից պահանջել է նրկայացնել բողոքարկվող որոշումը ստանալու և 7-օրյա ժամկետում բողոքարկելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ, այլ այն պատճառով, որ դատախազը բողոքարկման ժամկետը հաշվարկել է ոչ թե բողոքը ներկայացնելու, այլ օրենքով սահմանված ժամկետում բողոքարկելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ ստանալու պահից սկսած:

Նշված վերլուծությունից հետևում է, որ բողոքն առերևույթ ժամկետանց լինելու դեպքում վերադաս դատախազը բողոքի քննարկման իրեն վերապահված 7-օրյա ժամկետում իրավունք ունի միջոցներ ձառնարկել՝ պարզելու բողոքարկման 7-օրյա ժամկետի պահպանված լինելը: Մասնավորապես՝ կարող է բողոքաբերից պահանջել վիճարկվող որոշումը 7-օրյա ժամկետում ստանալու և բողոքարկելու հանգամանը հավաստող փաստաթուղթ, հարցում կատարել համապատասխան փոստային բաժանմունք և այլն:

Այն դեպքում, երբ բողոքաբերը վերադաս դատախազին օրենքով վերապահված 7-օրյա ժամկետում կներկայացնի համապատասխան փաստաթուղթ, ինչը կհավաստի նրա կողմից օրենքով սահմանված ժամկետում վիճարկվող որոշումը բողոքարկելու հանգամանքը, ապա վերադաս դատախազը տվյալ պարագայում ևս պարտավոր է բողոքը ըստ էության քննարկել և որոշում կայացնել: Հակառակ դեպքում բողոքը առերևույթ ժամկետանց լինելու հիմքով վերադաս դատախազի կողմից պետք է մերժվի:

Ընդ որում գործնականում առանձին դեպքերում նշված իրավիճակում որոշում է կայացվում ոչ թե բողոքը մերժելու, այլ առանց քննության թողնելու մասին:Թիվ ԵԿԴ/0088/11/17 գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անդրադառնալով վերադաս դատախազի՝ բողոքը առանց քննության թողնելու մասին որոշման իրավաչափությանը, գտել է, որ անտեսվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 4-րդ մասի այն պահանջը, որ դատախազը քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա կամ վերացնում է բողոքարկվող որոշումը և հարուցում քրեական գործ, կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

Այսպիսով, ելնելով հիմնախնդրի վերաբերյալ դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումներից և ձևավորված պրակտիկայի բազմազանությունից, կարծում ենք, որ սույն հոդվածի շրջանակներում ներկայացված վերլուծություններն ու հետևությունները կնպաստեն միասնական պրակտիկայի ձևավորմանը և վերադաս դատախազի կողմից քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման օրինականության, հիմնավորվածության ապահովմանը:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЗАКОННОСТИ ПОСТАНОВЛЕНИЯ О ПРЕКРАЩЕНИИ ПРОИЗВОДСТВА ПО УГОЛОВНОМУ ДЕЛУ (ПРЕКРАЩЕНИИ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ)

Арсен Мартиросян
Прокурор Лорийской области прокуратуры РА,
кандидат юридических наук, доцент

Статья посвящена основополагающим проблемам обеспечения прокурором законности и обоснованности постановления о прекращении производства по уголовному делу (прекращению уголовного преследования). В рамках статьи предметом обсуждения стали вопросы, касающиеся представления жалобы участником производства вышестоящему прокурору относительно прекращения производства по уголовному делу (прекращения уголовного преследования) и расчета предусмотренных процессуальным законом сроков ее рассмотрения, возникающие в связи с этим практические проблемы и пути их решения.

В результате изучения проблемы автором представлены предложения, направленные на разрешение проблем, возникающих в этой сфере на практике.

SEVERAL PROBLEMS OF ENSURING THE LEGALITY OF A DECISION TO TERMINATE CRIMINAL PROCEEDINGS (TERMINATION OF CRIMINAL PROSECUTION)

Arsen Martirosyan
Prosecutor of Lori Region, CJS, Assosiate Professor

The article is devoted to the fundamental problems of ensuring the legality and validity of the decision to terminate criminal proceedings (termination of criminal prosecution) by the prosecutor.

Within the framework of the article, issues relating to the submission of a complaint by a participant of a proceeding to a superior prosecutor regarding the termination of criminal proceedings (termination of criminal prosecution) and the calculation of the time limits provided by the procedural law for its consideration, practical problems and ways to solve them were the subject of discussion.

As a result of studying the problem, the author presented proposals aimed to solve problems that arise in this area in practice.

Բանալի բառեր – քրեական գործով վարույթի կարճում, քրեական հետապնդման դադարեցում, վերադաս դատախազ, բողոքարկման ժամկետներ, վարույթի վերսկսում, ժամկետների հաշվարկ, բողոքն առանց քննության թողնել, հավաստող փաստաթուղթ
Ключевые слова – прекращение производства по уголовному делу, прекращение уголовного преследования, вышестоящий прокурор, сроки обжалования, возобновление производства, расчет сроков, оставление жалобы без рассмотрения, удостоверяющий документ
Key words: termination of criminal proceedings, termination of criminal prosecution, superior prosecutor, terms of appeal, resumption of proceedings, calculation of terms, leaving the complaint without consideration, certifying document